

տասն եւ աւելի. կռվէին, ծէծվէին եւ մէկ-
 զմէկ սպանանէին. այլ եւ այլ չարիս դոր-
 ծէին. եւ մտեալ ի ներս այլ չկամէին անտի
 գնալ. մինչեւ եասախչիքն ի դուրս ձգէին 155
 դարպով. եւ այսպէս ուրախաց եւ մէլէմէթ
 եղեալ օտար ազգաց մէջն, մէկզմէկ ատէին
 եւ չուզէին: Զոմանս հետ բողոս, հետ ման-
 չու բռնէին. զոմանս հետ այլ չարութեան.
 այլքն կամաւ աղթարմա եղան, ոմանք հա- 160
 րամի, այլքն այլք իմն:

Որպէս ի մեր ժամանակս չորս հայ եւ
 կին մի Եզարէլ եւ Հերովդիադայ՝ Ֆէր-
 հատուտուրան Ուոֆայեցի միարանեալ ուխտ
 գնային սուրբ Յակոբ. եւ ամէն մէկ սուրբ 165
 Աստուածածնի պատկերն կախեցին վիզն ի
 վայր, զի ազգն այն յոյժ սիրեն եւ պատվեն
 զպատկերն Աստուածամօրն, վասն որոյ այնով
 չըջին եւ մուրան, զի աւելի առնուցուն: Եւ
 յերթալն հանդիպեցան ձիաւորի մի. եւ տվին 170
 զպատկերն համբուրել. իսկ նա եղեալ սրտին
 համբուրէր. եւ տեսեալ զի Հայք են, եհան
 զմեծ քէսան, ետ նոցա զուռուշ մի. եւ էր
 քէսան լի: Չայն տեսին Հայքն եւ մտաւ ի
 նոսա սատանան, իսկ չար կիներն առաւել եղև 175
 պատճառ չարի նոցա, որպէս եւ ա՛յն Աղա-
 մայ. եւ հասեալ յետեւանց առին զնա ի ձիուն
 վար. եւ սակաւ մի մեկուսացեալ ի ճանա-
 պարհէն՝ չարուով մորթեցին զանմեզ բարե-

160 յաղթարմա: — 163 յեզարէլ: — 169 յաւելի: